

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

(2 քիւ մէկ ծրարով)
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

— 0 —

Ծանուցման տղը
20 ամսիս



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԵ

Rédaction du journal

„Iravounk“

V. A. R. N. A. (Bulgarie)

— 0 —

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

— 0 —

Գրութիւնք եւ
շեկ տղիք

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Տարիէ մը ի վեր բոլոր աշխարհը հետաքրքրութեան ու յուզման մէջ պահող Չինաստանի դէպքերէն զատ, քանի մը շաբաթէ ի վեր Մակեդոնական ծանօթ խնդիրն ալ եկած է Եւրոպայի մեծ և Արեւելքի փոքր պետութիւնները ու ժողովուրդները յիշօրէն պարզեցնելու Պ. Մարաֆօֆի և իւր ընկերներուն Սօֆիայի մէջ ձեռք բերուած, ինչպէս կերեալ, Մա. կեդոնացւոց հարցը նոր տարազի մը մէջ մտցուցած է:

Տասնեակ տարիներէ ի վեր, զարնան դռները բացուելու նախ. բնթաց օրերուն մէջ, Պալատիան նահանգներու խաղաղութիւնը վեր. դրուելու վախը միշտ հարկադրած է դրացի պետութիւնները զգուշական միջոցներու դիմել: Այս տարի այդ վախը աւելի շեշտուած էր Սարաֆօֆի ու իւր ընկերներուն տաքարին ու յանգու. գըն գործունէութեանց պատճառաւ: Սակայն Պալատիան Սլաւ ժողովուրդին բնական պաշտպան ջարի կառավարութիւնը Ծայրագոյն Արեւելքի մէջ, Մանչուրիոյ խնդրով, եօթը հզօր պետութիւններու հետ պայքարած միջոցին, բնականապէս չէր ուզեր Պալատի. ներէն ալ վառօդի հոտեր առնել, որք կրնային այս նահանգներու համար իր ունեցած դարաւոր ձգտումները ահեղապէս վտանգել: Ուստի հարկ տեսաւ հայրենասէր Մակեդոնացիներուն եռանդը զբ. պիւր համար թէ՛ Պալատի կառավարութեան բարեկամական յանձնարարութիւններ ընել և թէ՛ թուրքերը զգուշութեան հրաւիրել, որով կարելի էր մակեդոնական կրակին վրայ առ այժմ մո. խիւր ցանել, մինչև որ ինք, Ռուսիա, Ծ. Արեւելքի մէջ իր գործերու սուր կերպարանքը մեղմէր:

Բայց այսօր ինչպէս գործնորդ ընթացքը ցոյց կուտան, Մակե. դոնացի հայրենասէրներուն և ռուսները զսպուելու ընդմիջ չունի, երբ մանաւանդ թուրքը, փոխա. նակ զգուշանալու, իր նահանգն.

րուն մէջ, խուժա խուժա Պալ. կարներ մահուան ու բերդարգէ. լութեան ծանրագոյն պատիժնե. բուն կենթարկէ, հարստահարու. թիւնները բազմապատկելով միա. տեղ:

Արդի պուլկար նոյնարարու. թիւնը Սարաֆօֆի ու իւր մէկ քանի ընկերներուն դէմ խիստ վարուելով հանգերձ, պարտաւ. բուած է ամբողջ Պալկարի ազգին «խտեալ» կազմող Մակեդոնա. կան հարցին համար գոհացուցիչ լուծում մը պահանջել: Արտաքին գործոց նախարար Մ. Տանէֆ, ինչպէս հաղորդեցինք մեր նախորդ թիւով, արդէն Սօֆիայի մեծ պետութեանց ներկայացու. ցիչներուն դիմած է որ ասոնք ստիպեն Սուլթանի կառավարու. թիւնը Մակեդոնիոյ բարեկեցութեան գումները գործադրելու ըստ Պէր. լինի դաշնագրին: հեռագիրը մը արդէն կը հաղորդէր թէ Պալատի. ուս պիտի տայ Պալկարիոյ այդ դիմումին, Ռուս թերթերը ար. դէն նոյն ոգով յօդուածներ կը գրեն թէ, քանի որ պուլկար կառավարութիւնը խաղաղութեան սիրոյն համար իր ազգակից Մա. յեդոնացիներուն դէմ խիստ կը վարուի, Սուլթանն ալ ընդօրին. գործադրելու է դաշնագրիներով իր ստանձնած պարտականութիւն. ները, եթէ ոչ պետութիւնք զինք ստիպելու են: «Թան» ալ Մա. կեդոնիոյ կացութիւնը իր վերջին թիւերէ միոյն խմբագրականին նիւթը բրած ու յօդուածը սախօքերով վերջացուցած է:

«Այս վտանգալի կացութեան բնաւ դժբախտ չի կա», կայ տն. շուշտ, բայց պէտք է որ անկեղ. ծարար գործածուի: Եթէ պետութիւնք ուզեն յիշել Պէրլինի դաշնագրին որոշ յօդուածը և ա. նոր գործադրութիւնը պահանջն. Դուռնէն վտանգը կրնայ փարու. տիլ: Ստէպ յիշուած այդ յօդ. ուածը համառօտակի կը տրամադ. րէ թէ թուրքիոյ եւրոպական ժողովուրդները կրէտէի նման վարչութիւնով մը պէտք է օժ. տուին: Մակեդոնիան երկու կամ

երեք նահանգներու բաժնեն, ա. սոնց իւրաքանչիւրին տան ալն. նմանութեամբ վարչութիւն մը որ չնորհուցաւ կրէտէին Հալէքալի դաշինքով (ինչ որ համաձայն է դաշնագրիներուն, պարս միշտ մէջ տեղ կը գերեն ու բնաւ չեն գոր. ծագիր) և կարգապահութիւնը կրնայ հաստատուիլ Մակեդոնիոյ մէջ ալ: Այնպէս առաջին օգտուողը թիւրքիան պիտի ըլլայ:»

Կարեւոր և նոյն իսկ կիսապաշ. տօնական եւրոպական թերթերու գործածած այս կտրուկ լեզուն ու պուլկար կառավարութեան մեծ պետութեանց ներկայացուցիչն. րուն բրած վերջին դիմումը կու. գան մեղ ցոյց տալ թէ Մակե. դոնական խնդիրը նոր տարազ մը կ'ստանայ դիւանագիտական մի. ջոցներով լուծուելու:

Երբ այս կերպով անգամ մը սեղանի վրայ դրուի թուրքիոյ եւրոպական նահանգներու խնդիրը, Հայաստանի բարեկեցութեան հարցն ալ միաժամանակ նոյն սեղանին վրայ դրուած պէտք է նկատուի, մանաւանդ թէ Անատոլիոյ վեց նահանգներու խնդիրը 1895 մա. յիս 11 ծրագրով արդէն վճռուած է: Եթէ պետութեանց մէկ քանի. ին շահը կը պահանջէ որ Մա. կեդոնիոյ յարեկորդութեան կամ ինքնավարութիւն ստանայ, միւս մէկ քանիին շահն ալ կրկին կը պահանջէ որ Հայաստանն ալ նոյն առաւելութիւններով օժտուի: Վեր. ջապէս այս երկու խնդիրները պե. տութեանց հակադրուող շահերով իրարու կապուած երկու հանգոյց. ներ են, որոնց միոյն լուծումը միւսն ալ միաժամանակ լուծելու առիթ կուտայ:

Գործադիր

ՁԱՐԻՆ ԵՒ ԻՐ ԽՈՐ- ՀՐԴԱԿԱՆՆԵՐՈՒՆ (1)

Ա.

Նորէն սպաննութիւններ, նորէն խռովութիւններ, նորէն մահապա. ժութիւններ, սարսափ, տարապարտ ամբաստանութիւններ, սպառնալի. քներ և ցասումն մէկ կողմանէ, և

(1) Նշանաւոր Ռուս ընկերարարն. Լէոն Թուրքիոյ Ձարին ուղղած այս վերջին նամակը «Թան»էն կարտատը. ւմբ:

նորէն ատելութիւնն ու վրէժխնդրու. թեան տենջը. ինքնագոհելու տենջը միւս կողմանէ, նորէն Ռուսները եր. կու թշնամի բանակներու բաժնուած ամենավայրագ ոճիրները կը գործեն և կը գործեն:

Կրնայ ըլլալ որ այս խռովութիւն. ները խափանուին, բայց կրնայ ըլ. լալ նաեւ որ զինուորները, ոստիկա. նութիւնը, զինուորականները հաս. կընան թէ ինչ որ անոնց ընել տալ կուզէր ոճիրներուն ամենագէշը, եզ. բայրապանութիւն է, և մերժեն հը նազանդիլ: Բայց, նոյն իսկ եթէ յա. ջողիք առժամապէս խեղդել այս շար. ժուկները, ասով ապստամբութիւնը զսպուած չպիտի ըլլայ, ան պիտի շարունակէ գաղտնի պատրաստուիլ և, կանուխ կամ ուշ, պիտի պայթի աւելի ևս սաստիկ և աւելի մեծ տա. ռապանքներու ու աւելի դժգոհ ոճիր. ներու գրգռ պիտի ըլլայ:

Ինչու ըլլային այս ամեն շարիք. երբ այնքան դիւրին է անոնցմէ խոր. չիլ: Ձեզ՝ իշխողացը կը դիմենք, Ձա. րէն, պետական խորհրդոյ անդամնե. րէն, նախարարներէն սկսեալ մինչև. կայսեր ազգականները, հօրեղբայր կամ մօրեղբայրները, եղբայրները և բա. րեկանները որ կրնաք անոր վրայ ազ. դեցութիւն բանեցնել համոզու. մով:

Ձեզ կը դիմենք ոչ թէ իբր թշնա. միներու, այլ իբր եղբայրներու որոց ճակատագիրը հակառակ ձեր կամքին՝ մերիներէն կապուած է, զի մեր կրած տառապանքները ի հարկէ ձեր վրայ պիտի անդադառնան աւելի սաստ. կութեամբ եթէ ետքէն խելամուտ ըլ. լաք թէ կրնայիք հեռացնել այս շա. րիքը և չ'ըրիք:

Վերջ տուէք ուրեմն իրաց այս վի. ճակին:

Ձեզ կամ մանաւանդ ձեր մեծամաս. նութեան շայնպէս կը թուի, թէ այս ամեն անկարգութիւնները յառաջ կուգան միմիայն անկէ որ խռովայոյզ ինչ ինչ անձինք երեւան կուգան կե. նաց սովորական ընթացքին մէջ և ժողովուրդը ապստամբութեան կը գրգռեն, և թէ հանդարտում յառաջ բերելու համար կը բաւէ նուաճել այդ խռովարկուները:

Արդարեւ, եթէ վրդովներու միակ պատճառը այս չարագործներուն երե. ւումն եղած ըլլար, բաւ էր միայն ձեռքաւարկէք, բանտարկէք կամ ան. հետացնէք զանոնք որպէսզի խռու. վութիւնները վերջանային անդարձա. բար: Բայց ահա երեսուն տարիէ ա. ւելի է որ կը հալածէք այս մարդիկը, կը կախէք զանոնք, հազարներով կը բանտարկէք անոնցմէ, և սակայն ա. նոնց թիւը կ'ստուարանայ և դժգո.

հուլիսին կը տարածուի այնպիսի զօրութեամբ մը, որ արդէն իրեն գրաւած է միլիոնաւոր գործաւորներ, ուսակաւն ժողովրդեան ամենամեծ մասը:

Պատճառը՝ անաւասիկ. իբր հետեւանք չարազէտ եւ պատահական սպանութեան Զարին, որ իր ժողովուրդը ստրկութենէ ազատեց, սպանութիւն մը որ գործուեցաւ փոքրիկ խումբ մը մարդերէ, նոր կառավարութիւնը որոշեց ոչ միայն այլ եւս չի յառաջադիւնել, այլ վերադառնալ իշխանութեան հինգսն եւ քիւսն ձեւերուն, որոց մէջ կարծեց տեսնել իր փրկութիւնը: Գոյն տարի կառավարութիւնը չարութեան յետադիմաց, իր այս ընկրկումովը հեռանալով եւս քան զեւս ժողովուրդէն եւ նորա պահանջներէն: Այնպէս որ մեր զօրադրութեանց պատասխանատու անձինքը այս չարագործ խռովարկունները չեն, այլ դուք իսկ էք, ո՞ր իշխողներ, որ միայն ձեր վայրենական անգործութիւնը կը մը տաճէք:

Ձեր հիմա ընկելքը դիւրին է. կը բաւէ գիւղացւոց տալ ուրիշ ամեն ուս քաղաքացիներու հոստար իրաւունքներ: Ասոր համար պէտք է անմիջապէս ջնջել. ա. «Ձէմսքի նաւ. չալնաքի» կոչուած աւատային անհեթեթ հաստատութիւնը. բ. գործաւորներուն եւ գործատեարց յարաբերութիւնները սահմանող ընդհանուր օրէնքները հաստատել. գ. գիւղացիները անցագիր ունենալու հարկէն ազատ կացուցանել. դ. Ազատել գիւղացիները պարբերատուութիւնէն, այն հոգեւոր վերադարձն համար, որոց իրական գինը վճարած են արդէն չաւտոնց. ե. եւ մանաւանդ պէտք է ջնջել այն ամօթալից մարմնային պատիժները, որք կը շարունակուին դեռ Ռուսիոյ ժողովրդեան ամենէն աշխատասէր, բարեբարոյ եւ բազմաթիւ մէկ մասին համար:

Բ. Պէտք է վերցնել «Օքրանան» (սաստիկ պաշարման վիճակ) որ կը ջնջէ ամեն օրէնք եւ ժողովուրդը կը մատնէ յաճախ անբարոյական, տխար եւ անողորմ մարդոց ձեռքը:

Պէտք է ջնջել այս պաշարման վիճակը, զի կը ծառայէ իրայն անեցնել ամբաստանները, լրտեսութիւնը եւ վայրագութեան գործածութիւնը ընդդէմ գործաւորաց, ամեն անգամ որ ասոնք պայքար մ'ունենան գործատեարց կամ կալուածատեարց հետ, բայց մանաւանդ պէտք է ջնջել, զի այս միջոցին հետեւանօք դուք կը դիմէք մահուան պատժին որ վերցնած է մեր օրինադրէն, եւ որ այնչափ հակառակ է ուսակաւն ժողովրդեան քրիստոնէական ոգւոյն, զի այդ պատիժը ամենամեծ մեղք մ'է ընդդէմ Աստուծոյ օրէնքին եւ խղճի:

Գ.

Պէտք է ջնջել ուսման եւ դաստիարակութեան դէմ գտնուող ամեն խոչնդոտները. վարժարանները ընդունելու համար այլ եւս եւ ոչ մէկ տարբերութիւն չեն ընկերութեան զանազան դասերուն կամ կրօնական դասական դասերուն մէջ: Պէտք է արգիլել որ վարժարանի մը մէջ ուսուցում տեղի ունենայ աշակերտաց մեծամասնութեան լեզուովը եւ մանաւանդ թոյլատրել ամեն ձեռնհաս դաստիարակի կամ ուսուցչի մասնաւոր վարժարաններ բանալ նախնական եւ երկրորդական ինչպէս նաեւ բարձրագոյն ուսման համար:

Վերջապէս, եւ այս թերեւս ամենէն կարեւորն է, պէտք է կրօնական ա-

զատութեան դէմ գտնուող ամեն արգելքները ջնջել: Պէտք է խափանել այն ամեն օրէնքները որ իբր ոճիւր մը կը նկատեն կառավարութեան ճանչցուած Եկեղեցւոյն չի հետեւիլը, պէտք է թոյլագրել որ հին—հաւատացեալները, Մկրտիչեանները, Մօլաքանները, Ըշթուղիստները ունենան իրենց մատուցներ, պէտք է անոնց ժողովներ ընկու իրաւունք տալ եւ չ'արգիլել զանոնք իրենց զաւակները մեծցնելու այն կրօնքին մէջ զոր միակ ճշմարիտը կը հաւատան: Կրօնական բանեւոր մէջ իշխանութեան միջամտութիւնը Գրիստոսէն այնքան ազդուապէս մատնանիշ եղած կեղծաւորութեան յանցանքն է, զի այս միջամտութիւնը արգելք կըլլայ մարդոց տիրանալու յարիւրներու մեծագոյնին, համարաշխտութեան որ կ'իրականանայ միայն ուզատ շարժումովը միանալոյն մարդկութեան, երբ սա երթալով մօտենայ մարդոց մէջ միութիւն հաստատելու կարող միակ ճշմարտութեան:

Ասոնք են Ռուս ժողովրդեան մեծամասնութեան չափաւոր եւ գիւրաւ իրազորեցիկ պահանջումները:

Օգնեցէք մեզի բարեփոխելու մեծամասնութեան կացութիւնը իրեն ամենէն սիրելի բանին, իր ազատութեան եւ իր մտաւորական զարգացումին մասին, եւ այն ատեն ձեր կացութիւնն ալ պիտի ապահովուի եւ պիտի բարեփոխուի:

Այս կոչը գրեցի ես ինքս, Լէօն Թոլսթոյ, եւ զայն գրելով ջանացի յայտնել ոչ միայն իմ կարծիքս, հապաւնեւ այն հազարաւոր յոյժ ընտիր, յոյժ անձնուէր եւ յոյժ խելացի Ռուսներու կարծիքը, որք լիբեւոյնք քան ինչ կը տեսնուի, ինչ որ ես:

Մոսկուա. 15/29 Մարտ 1901

Լեոն Թոլսթոյ

Թօլսթոյն տարի մը առաջ Նիքօլա Բ. Ձային ուրիշ նամակ մ'ալ ուղղած է. որուն գլխաւոր կէտերը հետեւեալներն են.

«Հարիւրաւոր, հազարաւոր Ռուսներ եւ լատիներները, խիստ տառապանքներու ենթարկուած են կրօնական հալածման պատճառաւ, որ ի գործ կը դրուի շարունակ Ռուսիոյ մէջ եւ կաւելնայ օրըստօրէ, ու այս այն տեսակ ժամանակի մը մէջ յորում բոլոր լուսաւորեալ մարդիկ եւ կառավարութիւնները շատոնց ճանչցած են այդ տեսակ հալածանքի մը փուռ, անտեղի եւ խիստ անարդար լինելը:

«Ես շատոնց իմիւր ինձ նուիրական պարտ համարած էի այս աշխարհէ հրաժեշտ տալէս առաջ փորձ մը ընել ձեր աշխարհը առջեւ պարզելու այն սոսկալի եւ իմար անգլխութիւնները որոնք մշտապէս կը գործուին ձեր անուամբ:

Եթէ դուք չէք գիտեր ձեր անունով գործուող այն բոլոր անտեղի անգլխութիւնները, ներքեցէք ինձ որ զանոնք ձեզ թուեմ, վստահացնելով թէ իմ խօսքերը պիտի հաստատուին բոլոր ուղղամիտ անձերէ եթէ ասոնց քննութիւն մը բանալու պաշտօն տրուի:

Բայց երբ հասկնաք թէ անմեղներուն, մեր ժողովուրդի լաւագոյններուն, տրուած նեղութիւնները ձեր անունովը միայն կարգաբեցնեն եւ թէ զայն արգիլելու իրաւունքը ձերն է. ձեր խիղճը հանգիստ պիտի չըլլայ այլ եւս մինչեւ որ պէտք եղածը չընէք:

Մի հարցնէք այն մարդոց որք հոյն իսկ իրենք հրամայած են այն ձախորդ միջոցները գործադրել եւ դուք մի առաջնորդուիք անոնցմէ, ոչ Բօպիէստօ-

նօնչէվէն (*), որ յետագէմ, նենգամիտ, յամառ եւ անգութ մարդ մըն է, ոչ Սիբիականէն (*) որ միշակ կարողութեան Տէր անհաստատ եւ քիչ լուսաւորուած անձ մըն է: Ասոնք ձեզ պիտ' ըսեն թէ ես բանտագուշող մը, անիշխանական մը, անկրօն մըն եմ, ու իմ բոլոր բաժնեւոր եւ խորհուրդներս անարդար են: Ես իմ անձիս համար չեմ որ կը խօսիմ, այլ աւելի ձեր վեհափառութեան համար է, որ կարող է վերջ տալ այն շփոթութեան որք կը գործուին օրինաւորութեան վերաբերելն տակ, եւ կործանել այս հիմերը որոնց վրայ կը կռթնին ոճիւրները:

Ուլեմի համարձակութիւն կառնեմ թերագրել ձեզ, 1) վերաքննել եւ ջնջել կրօնքի անտեղի հալածանքի վերաբերեալ այն հակասական եւ ապաւանջիլ օրէնքները, որոնք բացի Ռուսաստանէն ամեն տեղ գոյութիւն ունանալէ զգաւած են: 2) վերջ դնել երկրին կրօնքը չի գործադրելուն համար ի գործ դրուած բոլոր հալածանքներուն եւ պատիժներուն եւ ազատութիւն տալ զաւանանքի պատճառաւ բանտարկուած ու անտրուած բոլոր մարդոց, եւ 3) ուսումնասիրել թէ ինչպէս կարելի կըլլայ հաշտեցնել խղճի խնդիրները կրօնական տեսակէտով երկրին պահանջումներուն հետ—ինչպէս, զոր օրինակ, երգում ընելու եւ զինուորական ծառայութիւն կատարելու մերժումը—չը պատժել հակազգացող մը իրեն ձեր, այլ բարեփոխել, այս պարագային, զինուորական ծառայութեան տեղ պարտաւորել աշխատութիւն եւ սովորական երգումին տեղ դաստարանաց առջեւ հանդիսաւոր յայտարարութիւն ճշմարտութիւնը:

Այս կոչը կը վերջանայ սա պէս. Ձեզ շատ սիրող Թօլսթոյ:

ՀԵՐՔՈՒՄԻ Մ'Ը ԱՌԹԻԻ

Մեր ներկայ տարւոյ 25րդ. թիւին մէջ սա տողերը հրատարակած էինք.

«Տեղա հրատարակող «Իզթօչնի Գոյայ» անուն պուլկար թերթի վերջին թիւին մէջ, Մակեդոնական Ընկերութեան տեղւոյս մասնաճիւղին կողմէ պաշտօնական նամակ մը եւ խմբագրական գիտողութիւն մը հրատարակուած է որ բռնի դրամ պահանջող հայերու եւ օտար ազգիներու ընթացքը «աւագակութիւն» մակդիրով կը մկրտէ»:

Մեր զարչապարին շուրջը սո. զացող յայտնի իժեր Մակեդոնացիները մեզ հակառակօրէր բնելու որոշ գիտումով, ասոնց հայերէն չի հասկնալէն օգտուած, կը չարախօսեն ու սխալ կը թարգմանեն վերը գրուած միւր մէկ քանի տողը՝ թէ այդ աշխարհը քիչն բաւում ենք. Գոմիթէյի նամակին վերագրել ենք: Մինչդեռ քերականական տարրական կանոնները բիշ մը կարգացող ապուշը իսկ կը հասկնայ թէ «որ» յարաբերականը իր «կը մկրտէ» եղաւ կի բայով կը յարաբերէ խմբագրական գիտողութիւնը միայն:

(*) Սինօքի ընդհ. դատարանին է:
(**) Ներքին գործոց նախարարը

Եւ կը ցատիք որ տեղւոյս Մակեդոնական Ընկերութիւնը այդ փորձուած խեղաթիւրողներուն կրկին (*) հաւատք ընծայելով, զիջած է Շարժումի մէջ հերքում մը գրել մեր վերագրեալ տողերու մասին ըսելով կը «ցատիք որ տեղական երկու հայ թերթեր վերագրել են Գոմիթէյի»:

Մենք այս տողերը կարգաւորով, գիտեցինք այդ Գոմիթէյի առաջնակարգ անդամներուն ու պարզեցինք մեր գրածը իրենց առջեւ: Անոնք իրենց հայերէն չի գիտեսալէն օգտուող շարամիտներու խեղաթիւրումէն խաբուած ըլլալինն ցաւ իսիրտ տեսնելով, խնդրեցին թերթիս խմբագրէն որ րոնի մը տողով բացատրէ հասարակութեան թէ իրենց սխալ հաւերցուցեր են:

Այս գէպը անգամ մըն ալ կուզայ հաստատել այն առածը թէ «ստատանային ճրագը շուտ կը մարի»:

Բայց աւելորդ չենք համարը յիշեցնել տեղւոյս Մակեդոնական Գոմիթէյին, թէ, ուրիշ խեղաթիւրումներէ վերք միայն համար, իր լսածին հաւատք ընծայելէ առաջ հակառակ կողմն ալ լռէ:

Իսկ գալով տեղւոյս դաշնակցականները հայ ժողովուրդին յանձնարարելու խնդրոյն. մեր կողմէ միայն սա կանք թէ՛ մենք իբրեւ հայ մերիները օտարներէ աւելի լաւ կը ճանչնանք, մասնաւոր իրաւունքի խմբագրութիւնը որ տարիներէ ի վեր միակ. քուքուպով գիտած է անոնց հոգւոյն պատկերը:

Ահա հոս կարատապանք «իսթոյնի Գոյայ» պուլկարական թերթին խմբագրական նկատողութիւնը որ խնդրոյս նիւթ եղած է:

«Մենք շատոնց նշմարած ենք եւ մեզի հաղորդուած են այս աւագակներու համարձակութիւնները որոնք ուժի զօրութեամբ կերթան վառացիներէ զրամ կորզել վախճնելով, եւ որ եւէ հայրենասիրական դիմակի տակ մենք ալ բերանացի պէտք եղած տեղւոյն ուղարկութիւնը հրաւիրած ենք—բայց մեզի կը պատասխանուէր թէ իրաւ չէ: Այս աւագակները ոչ միայն բիծ մը կը նետեն ընկերութեան այլ մեր երկրին իսկ, որովհետեւ իրենց նպատակը բաց որոշ յայտնի է եւ ալ մէկ նութեան պէտքը չունի:

Դատական նախարարի շրջաբերականը՝ որ զրկուած է Տ.Տ. ընդհ. դատախազներուն եւ դատարանի նախագահներուն, կը վերաբերի այդպիսի սխեման, որոնք օտարի սեկիւնով կաշառուած են:

Մենք կառավարութեան ուղարկութիւնը կը դաժնենք որ պէտք եղած միջոցներ ձեռք առնէ եւ այդպիսի աւագակներու ակամքներէն բռնելով, ցուցնեն իրենց համապատասխանող տեղերը. եւ կը խնդրենք վստահութիւններ որ աւելի համարձակ ու քաջ

(*) Գանի մը ամիս ստալ ալ նոյն իժերը չարախօսած էին Մակեդոնացւոց թէ «Իրաւունք» գիտալարժուութեան սկզբունքին դէմ գրած է. բայց լստոյ մեր բերանացի տուած բացատրութիւններուն ի լուր «Որչափ ստալ խօսեր են, որչափ ստեր են» ըսելով զարմանք ու ցաւ կը յայտնէին եւ մեր գրածը, պատասխանելու դէմ, շատ պատշաճ կը գտնէին:

Մ. Խմբ:

ըլլան այդպիսի աւաղակներու եւ չարացործներու հանդէս :

Հոս յիշեմ : Քանի մը օր առաջ քաղաքիս մէջ երեւան ելած էին մի քանի Հայեր , ամերիկեան հպատակ , իրենց ըսածնուն յայելով , որ եւ է «Հայ դաշնակցութեան» մը պատուիրակները , թէ՛ վախցնելով—թէ Մակեդոնական—Օտրինի ընկերութեան անունը ազատելով կուզէին մեծաքանակ գումարներ շրջել մեր քաղաքացի հայ վաճառականներէն , որոնք ամեն ատեն պատրաստ են իրենց գրամեր նաւերու պէտք եղած տեղը ու տեղը : Սակայն այդպիսի անձերու երեւոյթը—անձանոթ ոչ ոքի , միայն հայ Դաշնակցութեան մը կողմանէ ձեռք անցուցած յանձնարարականով մը , ամեն մարդ պիտի ուզէ հետեւեալ հարցումը—«Ո՞վ են այս մարդիկը» եւ քննականաբար ամեն մարդ չի պիտի զոհանէ իրենց պահանջը :

Մարդս պէտք է ապուշ եւ անխելք ըլլայ որ ատենց խօսքերուն բազմութիւն դարձնէ : Մեր վառնացի Հայեր—պուլկարական կամ օտար հրպատակներ—որոնք յայտարարեցին թէ յիշեալ պատուիրակները (․) այնչափ վստահելի մարդիկներ են որչափ իրենք :

Մենք կը խրատենք մեր քաղաքացիները թէ , որ եւ է օգնութիւն չի ցուցնեն այս ինքնակոչ պատուիրակներուն , չըջաղարկելուն , որովհետեւ անոնք արջու ծառայութիւն կը մատուցանեն ոչ միայն իրենց այլ եւ Պուլկարիոյ :

Կը խնդրուի որ կառավարութիւնը թող չսայ հաստատուել այսպիսի հիւրեր քաղաքիս մէջ , քանզի կարելի է անհաճելի դէպքեր տեղի ունենան :

Իգոր ընկ. Գրայ

ՍԵՐՊԻԱ

—o—

Նոր Սահմանադրութիւնը եւ անոր Գլխաւոր քաղաքականութիւնները :

Առասիկ գլխաւոր արամադրութիւնները Սերպիոյ նոր Սահմանադրութեան :

Թագաւորը տէրութեան վեհապետն է : Անոր անձը նուիրական է , Հիմնական Օրէնքին համաձայն վերին իշխանութիւնը կը վարէ : Թագաւորին եւ արքայական գերաւորանքին անդամներուն կրօնքն է յոյն օրթոտոքսութիւն : Թագաւորը կը վաւերացնէ եւ կը հրատարակէ օրէնքները , կ'անուանէ բոլոր պաշտօնատարները եւ գերագոյն պետն է բանակին : Պատուանշաններ եւ աստիճաններ կը շնորհէ : Ներսէ կը շնորհէ եւ դրամ կը կուտէ , կը գումարէ եւ կը լուծէ Սքուլինան : Օտար երկիրներու համար երկրին ներկայացուցիչն է , կրնայ պատերազմ հրտարակել եւ հաշտութիւն կնքել , Հողային փոփոխութեան մը եւ երկրին վրայ գրուելիք յանձնառութեան մը վերաբերեալ դաշնագրութիւնները Սքուլինային կը ներկայացուին , Սերպիոյ իշխող թագաւորն է Ալեքսանդր Ա. Գահը նախ կառնի պալատի սեռէ անոր ուղղակի ժառանգորդներուն որոնք օրինաւոր ամուսնութիւններէ պէտք է ծնած ըլլան : Արու ժառանգորդ եթէ չըլլայ , իգական սեռէ ուղղակի ժառանգորդներուն կ'իյնայ յաջորդութիւնը : Անուղղակի սեռուներէն

չեն կրնար յաջորդութեան իրաւունք վայելիլ : Խորհրդարանը երկու ժողովներէ կը բաղկանայ : Սքուլինան ու Սերպիոյսը , որոնք չորս տարուան համար կը տրուին , ընտրողները 15 ֆր. տուրք վճարող պէտք է ըլլան եւ քննարկողները 30 ֆր. : Ընտրութիւնք գաղտնի քուէով կը կատարուին , իւրաքանչիւր գաղտնի պէտք է երեսփոխան մը ունենայ , որ առաջ նակարգ անձնաւորութիւն մը պիտի ըլլայ : Նաեւ հաւաքարանի շրջանաւարտ :

Սերպիոյսը 51 անդամներէ կը բաղկանայ : Սերպիոյսին մէջ տեղի ունէնէ ամեն քաղաքացի իշխան , որ չափահաս ըլլալ (18 տարեկան) Սերպիոյ—Սերպիոյսը , Նիշի եպիսկոպոս , ինքնապետին կողմէ ընտրուած երեսուն անդամներ որոնք ցկիտան կը պաշտօնավարեն եւ տուեն իր անդամներ ժողովուրդին կողմէ ընտրուած գաղտնի քուէով :

Երեք տարին անգամ մը այս վերջիններուն կէսը կը վերանորոգի : Սերպիոյսին ընտրողները պէտք է 45 ֆր. տուրք վճարող ըլլան եւ ընտրելի իրը 500 : Ամեն օրէնք , վաւերանալէ առաջ , պէտք է քննարկուի երկու ժողովներուն կողմէ : Եթէ ասոնք չկրնան համաձայնիլ , խնդրոյ նիւթ եղած օրինագիծը նոյն տարուան օրակարգին կը ընջուի : Սքուլինան կրնայ վերջնապէս ընդունիլ ելծուցայցը , Սերպիոյսին գերաւորութեան համաձայն : Սահմանադրութեան միւս որոշումը իր իշխաններ համաձայն են միւս երկիրներ : Սահմանադրութեան :

10հոկտ. 9/22 Ապրիլ 1907

«Իրաւունք» 20րդ. թիւին մէջ «Բաց Նամակ» մը կարգացի Պ. Երուանդ Թուրքաճեանէ ստորագրուած :

Գերեւորան մութին մէջ քանի մը «անձնուէրներ» բիրտով ու սուրբով գինուած , Պ. Նամակագրին վրայ յարձակած են զայն սպաննելու անազոք նպատակաւ :

Այդ յարձակման շարժառիթը եղած է , ժամանակէ մը ի վեր Պ. Թուրքաճեանի շուրջը պտտած այն զրոյցը որ իր թէ անկա ազգը մատնող եւ կամ դաւաճանող անարգ արարած մը ըլլար :

Պ. Նամակագիրը արդար զայրոյթով մը կը բողբէ այդ զրպարանութեանց դէմ , եւ կը պահանջէ իր ամբաստանիչներէն որ , ճակատաբաց հրապարակ գան , ու երեւան հանդիւր քաջութիւնը ունենան իրեն վերագրուած այդ ազատ գործին ապացոյցները :

Տարակոյս չունինք որ—ինչպէս շատ պարագաներու մէջ փորձով ալ տեսած ենք—այս անգամ ալ մութին մէջ ամբաստանութիւններ սարքող այդ պաշտօնները յաւիտենական լուծութեան պիտի դատապարտուին :

Մէկ իրողութիւն մը պիտի բաւէ խիստ համար այն բերանները , որոնք մութ անկիւններու մէջ միամիտներու սկանչին կը փոփանան թէ՛ Պ. Թուրքաճեանը լրտես մըն է :

Պ. Թուրքաճեանի անունը ինծի անծանօթ չէ , միեւնոյն դելի գաւակը ըլլալով , քիչ թէ շատ անոր վարքը բարձր ու նկարագիրը ճանչցած եմ , ուստի արդարութիւնը վրաս պարտք կը դնէ որ անոր կատարած միայն մէկ գործը «Իրաւունք» Պատ. ընթերցողներուն հաղորդեմ , զատուութիւնը իրենց ազատ կամքին ձգելով :

1896ի մեծ կոտորածին օրը Պուրոյ մէկ Հայաշատ գիւղը կը սկսի ջարդուիլ : այդ զօրազգ գիւղին պաշտպանութիւնը

նը ստանձնող քանի մը աղաքներէ բաղկացեալ Դաշնակցական անվար հերոսները , լեզապատառ հազիւ կարող կրլան չունենին եկեղեցիին բակը քաշելու :

Կոտորածն ու անբուժելի վնասներէ բաղկար ժամեր կը տեւեն , ու ժողովուրդին չ'ջարդուած մէկ փոքրիկ մասը շնչապառ իր հայրերուն պաշտած Աստուծոյ տունը կապատանի :

Ու հաւ մեր տաք գլուխ պարոնները գործելու ժամը հասած համարելով կսկսին ալ ու ձախ սպաննալիքներ , ստիպումներ ընել որ ժողովուրդը չըլլայ թէ եկեղեցիէն դուրս ելնէ : «Ի՞նչոք չպիտի ելլէք» , «գոլար մի» ելնէք հիմա ինկիլիպին էլ չիտ պիտի գայ վազն ալ Սոսկիֆինը» ու իրենց այս անխոհեմ պոռոտախօսութիւնը եկեղեցիին մէջ գտնուած քանի մը վատ հայերու ուշադրութիւնը կը գրաւէ , ու իրր կ'ըլլալիներ կատաւարութեան կը մատնուին :

Մեր տղայ հերոսներուն երբ կը հաղորդուի որ իրենց կեանքը վաւերի մէջ է , անմիջապէս կ'սկսին իրենց կեանքը ազատելու միջոցներուն վրայ խորհիլ : Ու փութամ հոս ըսել թէ՛ այդ երեք աղաքներուն կեանքը փրկողը Բաց Նամակը ստորագրող Պ. Երուանդ Թուրքաճեանն էր : զանոնք արտասահման ապահով փախցնելէն յետոյ էր որ ցած մարդու մը պափուճճի Օննիկի մը մատնութեան զոհ պիտի ըլլար եթէ հպատակութեան թուղթ մը գինքը չպաշտպանէր քիչ մը :

Ու այս տեսակ անձնաւորութեանց վրայ էր որ , ամենագեղեցիկ ոճրագործութիւններ կատարել կուզեն : ամեն անոնք , որոնք անգիտակցաբար կոյր գործիք կը դառնան բոլոր չարամիտ ու շահաւակ «ազգասէրներու ըսին կրօնի կոր»ներու վրայ հիմնուած դատողութեանց :

Նոր երեւոյթ մը չէ ասիկա , Պուրոյս ալ , Հայաստան ալ , կատարուած են անարդար ու անհեթեթ ոճրագործութիւններ , բայց Արտասահմանի մէջ այս սխալը երեւոյթը շարունակուելու չէ , Պուլկարիոյ Հայ ժողովուրդին վրայ մեծ պարտականութիւն մը կը ծանրանայ , ինքն է որ իր խստապահանջութեամբ պիտի վռնտէ , պիտի չէզոքացնէ այն բոլոր չարերը , վատերը , որոնք Ազգասիրութեան քողին տակ թաքցուած ամենէն կեղտոտ չահատակութիւններ կը գործադրեն , որոնք բնականաբար հայութեան դրժբող ճակտին արատ քսելու , եւ անոր բարոյականին վերջնական անկումը կը սպողնայ : Պուլկարիոյ Հայ ժողովուրդին լուծութիւնը այս պարագային շահաւակներու մեղաւակից ըլլալը պիտի ապացուցանէ :

ԱՐՇԱՄ ԿԱՐԿՈՒՏԵԱՆ

ՁԵՆՈՅՑ

Պարոն Խսակ Առվախի (Վարդո) անձին ու հաստատութեան նկատմամբ վարած բերանացի կամ գրաւոր յարձակումներուն հանդէպ միջնա ցարդ արհամարհոտ լուծութիւն մը միայն պահած եմ :

Այդ լուծութիւնը պիտի շարունակեմ , հիմա աւելի քան երեք արհամարհոտ , վասնզի լուրջ պատճառներ ունիմ հաւատալու—եւ ս. մեն բանիմաց մարդ ալ այս մասին համակարծիք պիտի ըլլայ ինձ—թէ պր. Առվախի , դիտմամբ , անտեղի եւ անհիմն խնդիրներ հրապարակ կը նետէ : հաստատութեան ուշադրութիւնը իր վրայէն հեռացնելու համար , երբ ինք ամեն կողմանէ իրեն ուղղուած կարգ մը բարդ ու ծանրակշիռ հարցումներուն պատասխանելու ողորմելի անկարողութեանը մէջ կը գտնուի :

Այս առթիւ , ու միանգամ ընդ

միշտ՝ կարեւոր կը համարիմ յայտարարել թէ՛ սիրով ու նոյն իսկ շնորհակալութեամբ ընդունած եմ , միշտ , այն ամեն ազնիւ , պարկեշտ ու անկողմնակալ անձնաւորութիւնները , որոնք վարժարանս այցելած ու եւ է խնդրոյ նկատմամբ փափաքած են լսել բացատրութիւններս , զոր երբէք չեմ զրացած :

Վառնա Կրօն Միքայէլեան
10/23 Ապրիլ 1907

Դ. Խոյր. Տ. Կրօն քանի որ չի գիտէր իր պատասխանել Առվախի պէս մէկու մը հարցումին , մենք կը խնդրենք իրմէ որ հաճի պէտք եղած բացատրութիւնը տալ հրապարակուած խնդրոյն առթիւ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգ. Հիւանդանոցի մատուին կից գտնուող պղտիկ շէնքը հրոյ ճարակ եղած է , եւ բարեբաղդաբար անմիջապէս հասած օգնութեանց շնորհիւ յաջողած են կրալը իր տեղը մարել : 250 սկի զնա կը հաշուի , զոր Հիւանդանոցի շէնքերը ապահովագրող ընկերութիւնները պիտի վճարեն :

—Ամերիկեան Թրապիսի մէջ վախճանած է տեղւոյն Տէր Սրիստակէս քահանայ , որուն մարմինը Յունաց եկեղեցին փոխադրել եւ օծում կատարել մերժած է տեղւոյն յոյ նաւագ երէցը , բայց ստիպումներու հետեւեալ , վերջապէս հաճած է գոնէ հանգուցելոյն տունը գալով , հոգեհանգիստը կատարել եւ ննջեցնել Յունաց գերեզմանատան մէջ ամփոփել ըստ պատշաճին :

—Ամերիկայի ազգ. թերթերը պանակոծումի նոր դէպք մը ալ կը պատմեն : Այս անգամ կրկին ծեծուողը Ա. Վառնան է եւ ծեծողը Պ. Արզումանը : Կը ցուէնք որ այս վերջինը իրեն թուրաբար մէջ գտնուել , թէ եւ իր հակառակորդը Հայքեմիքի մէջ գինքը անպատուի փորձած ըլլայ , որուն ինք բնաւ կարեւորութիւն տալու չէր , ինչպէս մենք հոս վարդոյի Շարժումի մէջ բրած փոնգաւորներ իսպառ անկարեւոր կը նկատենք :

—Ինչպատ Ամերիկայի Հայոց Համաժողովի ձեռնարկներուն եղած հանգանակութեանց գումարը հասած է 141 տոլար 35 սենթի :

—Ուսթըրի մէջ Հնչ. մասնաճիւղին վերջին մէկ գումարումին 200 տոլար նուիրատուութիւն եղած է :

—Վանէն 150ի չափ հայ ընտանիքներ Ռուսիա գաղթելու փափաք յայտնած են :

—Խորհրդ. քաղաքին մէջ հայոց դէմ բռնութիւնը բազմապատկուած է . ժողովուրդէն 16 տարուան տուրք կը պահանջեն եղեր :

